Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
հոկտեմբերի 23-ի N 1483 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Վերակառուցման և Զարգացման եվրոպական բանկին

Իմ՝ որպես Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի (այսուհետ՝ անդամ պետություն) իրավասության շրջանակում սույնով հաստատում եմ, որ՝

1) անդամ պետությունը սույնով բաժանորդագրվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կանոնադրական կապիտալում լրացուցիչ 2,010,000 (երկու միլիոն տասը հազար) եվրոյի բաժնեմասերին՝ համաձայն Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 265՝ «Կանոնադրական կապիտալի և դրա բաժանորդագրությունների ավելացում» բանաձևով սահմանված պայմանների և դրույթների.

2) անդամ պետությունը սույնով հաստատում է, որ բաժանորդագրությունն ապահովելու նպատակով իրականացվել են բոլոր անհրաժեշտ օրենսդրական և այլ ներպետական ընթացակարգերը.

3) անդամ պետությունը պարտավորվում է բանկի պահանջի դեպքում տրամադրել համապատասխան տեղեկատվություն նշված ընթացակարգերի վերաբերյալ:

Բաժանորդագրված լրացուցիչ բաժնեմասերի դիմաց բոլոր վճարումները անդամ պետությունը կկատարի եվրոյով:

_____
(անուն, ազգանուն և պաշտոն)
(ստորագրություն)
(ամսաթիվ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ